ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մարգարիտա ՄԻՆԱՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Ղազարյանի՝ 168.am - ում հրապարակված հոդվածի դեմ բողոքի կապակցությամբ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2025թ. հուլիսի 31-ին ԶԼՄ-ների Դիտորդ մարմին է դիմել Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Թագուհի Ղազարյանը՝ բողոքելով 168.am կայքում հրապարակված «Ո՞ւմ «նավոդկով» է ԱԱԾ-ն ասպատակել Ամերիկյան համալսարանը» վերնագրով հոդվածի կապակցությամբ: Դիմումատուն, մեջբերելով նյութից որոշ հատվածներ եւ ներկայացրել իր առարկությունները դրանց վերաբերյալ, հոդվածում տեղ գտած տեղեկությունները որակել է զրպարտչական եւ կեղծ: Մասնավորապես.

> **Մեջբերում հոդվածից**. «…Թագուհի Ղազարյանի աշխատանքային պայմանագիրը չերկարացնելու պատճառն ուսանողների բողոքն է՝ վերջինիս կողմից դասաժամերը ՔՊ-ական քարոզի վերածելու առիթով…»:
> **Թագուհի Ղազարյանի առարկությունը**. «…այս պնդումը սուտ է՝ փաստահավաք խումբը արձանագրել է, որ իմ դասաժամերին քաղաքական քարոզչությամբ զբաղվելու՝ [Վահրամ] Տեր-Մաթևոսյանի դիրքորոշումը չի համապատասխանում իրականությանը:
>
> **Մեջբերում**. «…Թագուհի Ղազարյանը, մեր տեղեկություններով, լսարան է մտել կոնկրետ քաղաքական քարոզչության նպատակով»:
> **Թ. Ղ. առարկությունը**. «…այս պնդումը սուտ է, ես լսարան եմ մտել դասավանդման նպատակներով»:
>
> **Մեջբերում**. «…փորձելով խաղաղության պայմանագրի՝ որպես միակ ու անկրկնելի լուծման ցնորամտությունն ուսանողներին անդադար քարոզելով ու նրանց համոզելով, որ ճիշտը հենց դա է»:
> **Թ. Ղ. առարկությունը**. «…թեեւ խաղաղության՝ որպես համամարդկային քարոզչության մեջ ոչ մի վատ բան չկա, բայց այս պնդումը սուտ է, ես լսարանում երբեք չեմ խոսել խաղաղության պայմանագրից»:

Մեջբերում. «…Այդ միակողմանի քաղաքական քարոզչությունը դուր չի եկել ուսանողներին, որոնց բազմաթիվ բողոքներին, ի վերջո, ականջալուր է եղել Համալսարանի ղեկավարությունը»։
Թ. Ղ. առարկությունը. «…այս պնդումը սուտ է, իմ դասախոսական գործունեության ընթացքում բոլոր ուսանողներից միայն մեկն է նշել, որ իր կարծիքով քաղաքական գործիչները չպետք է դասավանդեն։ Իսկ ընդհանուր առմամբ, իմ ուսանողների միջինում 70%-ը հայտնում է, որ կցանկանար ինձ հետ ևս մեկ դասընթաց ունենալ, ինչի գրավոր վկայությունները կան»։

Մեջբերում. «…Հենց սա է, որ ոչ մի կերպ չի մարսում ՔՊ-ական պատգամավորը»։
Թ. Ղ. առարկությունը. «…այս պնդումը սուտ է, ես մինչև այս իրադարձությունները հայտնել եմ, որ դասընթացը վերականգնելու ցանկություն չունեմ, ինչի գրավոր ապացույցները կան»։

Մեջբերում. «…ՔՊ-ական պատգամավորը բողոքել է ուր ասես՝ օգտագործելով իր անձնական ու քաղաքական կապերը»։
Թ. Ղ. առարկությունը. «…այս պնդումը սուտ է, ես որոշումը վիճարկել եմ միայն ինստիտուցիոնալ մեխանիզմներով»։

Մեջբերում. «…Այլապես Զեմֆիրայի երևանյան համերգին Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը, չէր գնա հենց Թագուհի Ղազարյանի հետ ու տեսանյութ էլ չէր հրապարակի»։
Թ. Ղ. առարկությունը. «…այս պնդումը սուտ է, իմ և Աննա Հակոբյանի անձնական մտերմությունը ոչ մի կապ չունի Ամերիկյան համալսարանի հետ, այն սկսվել է Ամերիկյան համալսարանում դասավանդելուց շատ առաջ։

2. Դիմումի հիման վրա ԴՄ համակարգողը գրավոր տեղեկացրել է 168.am-ի խմբագրությանը դիմումի բովանդակության մասին եւ առաջարկել ներկայացնել դիրքորոշում ու պարզաբանումներ։ Լրատվամիջոցը, սակայն, չի պատասխանել ԴՄ նամակին։

3. Դիտորդ մարմնի համակարգողը նաեւ լրացուցիչ կապվել է դիմումատուի հետ եւ պարզաբանումներ ստացել դիմումի մեջ նշված որոշ փաստական հանգամանքների կապակցությամբ։

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը**
Հոդված 8. Հերքման եւ պատասխանի իրավունքը
1. Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը։

5. Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել իր պատասխանի հրապարակումը:

II. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկայի կանոնագիր**

… խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝
1.1. Մինչեւ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ:
1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը:
1.5. Վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի եւ հավաստի տեղեկությունների վրա:
2.1. Հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները:
2.2. Հնարավորինս խուսափել տեղեկատվության խորհրդապահական աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որեւէ պարագայում չբացահայտել այն:
6.1. Աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից:
6.3. Ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք:

Գ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը,

Քննելով պատգամավոր Թագուհի Ղազարյանի դիմումը 168.am կայքում *«Ո՞ւմ «նավոդկով» է ԱԱԾ-ն ասպատակել Ամերիկյան համալսարանը»* վերնագրի ներքո հրապարակված հոդվածի կապակցությամբ, նախ հիշեցնում է, որ Դիտորդ մարմինը, առաջին հերթին, ուսումնասիրում է բողոքի համապատասխանությունը մասնագիտական էթիկայի պահպանման տեսակետից, չունի փաստերի ճշգրտության կամ զրպարտության վերաբերյալ գնահատական տալու հանձնառություն, ինչպես նաեւ բավարար գործիքակազմ՝ վերջնական եւ միանշանակ դատողություններ անելու վիճարկվող տեղեկությունների՝ իրականությանը համապատասխանության մասին:

Այդուհանդերձ, Դիտորդ մարմինն արձանագրում է, որ խնդրո առարկա հոդվածն իր բովանդակությամբ հակասության մեջ է մտնում էթիկայի Կանոնագրի 1.1, 1.2, 1.5, 2.1. կետերի հետ, քանի որ

- նյութի հեղինակը (լրատվամիջոցը) դրա հրապարակումից առաջ չի գործադրել բոլոր անհրաժեշտ ջանքերը՝ ստուգելու համար ստացված տեղեկությունների հավաստիությունը,
- չի ներկայացրել Թագուհի Ղազարյանի տեսակետը կամ մեկնաբանությունը,
- վերլուծություններ եւ հետեւություններ կատարելիս չի հիմնվել հարցի բազմակողմանի ուսումնասիրության վրա,
- չի նշել տեղեկության աղբյուրը եւ ընթերցողին չի տեղեկացրել աղբյուրի գաղտնիության անհրաժեշտության մասին։

Դիտորդ մարմինն ափսոսանք է հայտնում, որ դիմումատուն չի օգտվել խնդիրը լրատվամիջոցի հետ անմիջականորեն պարզելու եւ հերքման կամ պատասխանի իրավունքից օգտվելու հնարավորությունից։ Այս առիթով ԴՄ-ն հիշեցնում է, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ կետերի համաձայն՝ Թագուհի Ղազարյանը կարող էր դիմել 168.am-ի խմբագրությանը՝ իրեն վերաբերող տեղեկատվության հերքման կամ պատասխանի ակնկալիքով։ Միեւնույն ժամանակ, հաշվի առնելով իշխող քաղաքական ուժի եւ ընդդիմադիր լրատվամիջոցների միջեւ գոյություն ունեցող առճակատումը, ինչպես նաեւ 168.am-ի՝ վեճի կարգավորմանը մասնակցելու ցանկության բացակայությանը, ԴՄ-ն իրեն իրավունք է վերապահում եզրակացնելու, որ նման հանգամանքներում հերքման կամ պատասխանի իրավունքի արտադատական կարգով կիրառումը գործնականում գրեթե անհնար է։

Դիտորդ մարմինը հիշեցնում է, որ Ինքնակարգավորման նախաձեռնության անդամները (որպիսին նաեւ 168.am-ն է), ստանձնած պարտավորության համաձայն, Կանոնագրի խախտումների վերաբերյալ Դիտորդ մարմնի եզրակացության՝ խախտմանը վերաբերող հատվածները պետք է առանց մեկնաբանությունների հրապարակեն իրենց լրատվամիջոցում եւ այդ մասին տեղեկացնեն ԴՄ-ին՝ կցելով հրապարակման հղումը։

Ընդունվել է 2025 թ. սեպտեմբերի 16-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՄԱ մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Ռեժիսոր, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի պրոֆեսոր
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Սուրեն ԴԵՀԵՐՅԱՆ
Ampop.am-ի հիմնադիր խմբագիր
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Արսեն ԽԱՌԱՏՅԱՆ
«Ալիք Մեդիա» լրատվական-վերլուծական կայքի հիմնադիր
Արեւիկ ՍԱՀԱԿՅԱՆ
Factor TV-ի գործադիր տնօրեն
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի անդամ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են Ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 94-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնության համաժողովում, 2024 թվականի մայիսի 18-ին: